ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 26 - Ա
30 հուլիսի 2013 թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N 6 – Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <բ> ենթակետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ, 1,22-րդ կետերի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1180-Ն որոշման դրույթներով

կարգադրում եմ՝

1. Արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ նախապես բնակչության նյութական և մշակութային արժեքների տարահանման պլանավորման, նախապատրաստման և անցկացման ապահովման նպատակով՝

1) ստեղծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության տարահանման հանձնաժողով՝ համաձայն հավելված 1-ի.

2) հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 2-ի.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովի կազմում ստեղծել աշխատանքային խմբեր՝ համաձայն հավելված 3-ի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովի նախագահին՝ մեկամսյա ժամկետում Գեղարքունիքի մարզի տարահանման պլանը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2013 թվականի հունիսի 7-ի N 501-Ա հրամանով հաստատված տարահանման պլանի օրինակելի ձևին:

3. Մարզի համայնքների ղեկավարներին՝

1) ստեղծել՝

ա. տարահանման հանձնաժողովներ.

բ. տարահանման /ընդունման/ հավաքակայաններ.

գ. ժամանակավոր տեղակայման կետեր.

դ. երկարատև բնակության կետեր.

2) հանձնարարել համայնքների տարածքներում գործող կազմակերպությունների ղեկավարներին ստեղծել օբյեկտային տարահանման հանձնաժողովներ.

3) որոշել տարահանման հավաքակայանների կառուցվածքը և կազմը, մշակել տարահանման հավաքակայանների /ընդունող հավաքակայանների/ կառուցվածքային մարմինների գործառնական պարտականությունները և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովի նախագահի հաստատմանը՝ եռամսյա ժամկետում.

4) առաջնորդվել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2013 թվականի հունիսի 7-ի N 501-Ա հրամանով:

4. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի հունվարի 27-ի «Տարահանման մարզային հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2008 թվականի մայիսի 20-ի N 44-Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 6-Ա կարգադրությունը:

5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովի նախագահ Մ. Մանուկյանի վրա:

6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՄԱՐՏԻՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2013 թ. հուլիսի 30-ի
N 26 - Ա կարգադրության

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Մանուկյան Մ.	- մարզպետի տեղակալ, **հանձնաժողովի նախագահ**
Ասատրյան Ի.	- մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ, **հանձնաժողովի նախագահի տեղակալ**
Թաթարյան Յու.	- մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ, **հանձնաժողովի քարտուղար**
Աղեկյան Ա.	- մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Բաղալյան Գ.	- մարզպետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության պետ
Մելքոնյան Ա.	- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Հարությունյան Ա.	- մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալ
Բուդումյան Խ.	- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ
Ադամյան Ա.	- ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության պետի տեղակալ
Խաչատրյան Ս.	- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի վարիչ
Հոդաբաշյան Վ.	- մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ
Մելքոնյան Գ.	- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ
Մարգարյան Վ.	- <<ՀԷՑ>> ՓԲԸ <<Գեղամա>> մասնաճյուղի <<Գավառ>> ցանցի ԱՏ և ՏՇ ավագ ճարտարագետ
Խանդանյան Ա.	- <<Արմենթել>> ՓԲԸ-ի արևելյան տարածքային կենտրոնի Սևան – Գավառ ուղղության ավագ ճարտարագետ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ